նա,— անհրաժեշտ է լուծել գիտական մշակումների արդյունավետության աստիճանի բարձրացման հարցը։ Դա մի խնդիր է, որը ամենօրյա ուշադրություն ու հոգատարություն, տևական համակողմանի աշխատանք է պահանջում։

Ավարտելով զեկուցումը, ընկ. Գ. Ս. Դավթյանը նշեց, որ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կոլեկտիվը լի է վճռականությամբ պատվով կատարելու ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվների նախագծով և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի XXV համագումարի որոշումներով գիտնականների առջև դրված խնդիրները։

Հաշվետու զեկուցման քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը, որը իր ելույթը նվիրեց գիտական հետազոտությունների մեջ կապիտալ ներդրումների արդյունավետության հարցերին։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղ. Իոսիֆյանը խոսեց մեր երկրում գիտատեխնիկական հեղաշրջման բնույթի, գիտական հիմնարկների աշխատանքի ձևերի ու մեթոդների մասին։

Բնության պաշտպանության հարցերին նվիրեց իր ելույթը պրոֆեսոր Խ. Պ. Միրիմանյանը։

Ընդհանուր ժողովում «Ուղեղի նոր նեյրոհորմոնները և ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունները» զեկուցմամբ հանդես եկավ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Գալոյանը։ Նա ամփոփեց նոր հորմոնների հայտնաբերման ուղղությամբ կատարված 12 տարվա հետազոտությունների արդյունքները։

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը ընտրեց ակադեմիայի նոր անդամներ։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ ընտրվեցին՝ Գ. Մ. Ղարիբյանը (ֆիզիկա), Բ. Ե. Մարգարյանը (աստղագիտություն), Ա. Լ. Թախտաջյանը (բուսաբանություն), Մ. Ք. Չայլախյանը (բույսերի ֆիզիոլոգիա), Գ. Բ. Ղարիբջանյանը (նոր և նորագույն պատմություն), Լ. Ս. Խաչիկյանը (հին և միջին դարերի պատմություն), Գ. Գ. Սևակը (լեզվաբանություն)։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ ընտրվեցին՝ Է. Հ. Միրզաբեկյանը (կառավարման պրոցեսներ), Ֆ. Տ. Սարգսյանը (կառավարման պրոցեսներ), Բ. Լ. Աբրահամյանը (շինարարական մեխանիկա), Ա. Ա. Գալոյանը (ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների քիմիա), Ս. Հ. Վարդանյանը (ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների քիմիա), Լ. Մ. Ջանփոլադյանը (գյուղատնտեսական գիտություններ), Ա. Ա. Մաթևոսյանը (գյուղատնտեսական գիտություններ), Ռ. Պ. Ստամբոլցյանը (բժշկական գիտություններ), Ա. Բ. Բաղդասարյանը (աշխարհագրություն), Գ. Ա. Գալոյանը (նոր և նորագույն պատմություն), Վ. Ս. Նալբանդյանը (գրականագիտություն), Գ. Ա. Բրուտյանը (փիլիսոփայություն)։

ՀՍՍՀ ԳԱ կազմում ստեղծվեց մեխանիկայի և կառավարման պրոցեսների բաժանմունք։ Այժմ ակադեմիան բաղկացած է գիտությունների վեց բաժանմունքներից։

Ժողովում ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ նախագահություն հետևյալ կազմով. ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, ՀՍՍՀ ԳԱ փոխ-պրեզիդենտներ՝ ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ն. Մերգելյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղ. Իոսիֆյանը, ՀՍՍՀ ԳԱ նախագահության գլխավոր գիտնական քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Մ. Ջրբաշյանը, մեխանիկայի և կառավարման պրոցեսների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանը, քիմիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանը, Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Գ. Մաղաքյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ա. Ֆանարջյանը, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ի. Ալիխանյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը։

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 17-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի ինստիտուտների և հիմնարկների մեկ տարվա կատարած աշխատանքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը։

Զեկուցողն ընդգծեց, որ հասարակական գի-

տությունների բնագավառի գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվների գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում ընթացել է մեր կուսակցության և պետության հիմնադիր ու առաջնորդ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի և Հայաստանում սովետական իշխանության հաստատման և կոմունիստական կուսակցության հիմնադրման 50-ամյակի արժանավայել դիմավորելու նշանաբանով։ Այդ երկու մեծ հոբելյանները ակադեմիայի գիտնականների կողմից նշանավորվել են տնտեսագիտության, պատմության, լեզվաբանության, գրականության, փիլիսոփայության, իրավագիտության, ազգագրության, արվեստաբանության, արևելագիտության դանազան բնագավառներում կատարված արժեքավոր հետազոտություններով։

Այնուհետև զեկուցողը հանգամանորեն կանգ առավ բաժանմունքի առանձին ինստիտուտների կատարած գիտական պրոբլեմների վերլուծության վրա։

Ընդհանրացնելով բաժանմունքի հիմնարկների կատարած աշխատանքը, Ծ. Պ. Աղայանը ընդգծեց, որ հաշվետու տարում ընդլայնվել է հասարակական բաժանմունքի գիտական հիմնարկների ուսումնասիրությունների ծավալը և բարձրացել հրատարակվող աշխատությունների տեսակարար կշիռը։

Հաշվետու ժողովում զեկուցողը կանգ առավ նաև գիտական հիմնարկների աշխատանքներում տեղ գտած թերությունների վրա։

Նա հատկապես նշեց, որ ակադեմիայի ինստիտուտների աշխատանքներում դեռևս չի հաղթահարված բազմաթեմայնությունը, հարկ եղած ուշադրություն չի դարձվում կատարվող թեմաների ձգձգման և այլն։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ս. Տ. Երեմյանը, Է. Բ. Աղայանը, Դ. Սևակը, Բ. Ն. Առաքելյանը և Խ. Ա. Բարսեղյանը։